№ 257 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 19 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 19 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 257

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 228.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԱՌԱՋԻԿԱՅ 1910 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(38-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանօնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։ Հին բաժանորդներից խնդրվում է կցցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութիւն

Նոյեմբերի 21-ին, շաբաթ, երեկ. ժամը 8-ին, տեղի կունենայ Ընկերութեան հանդիսաւոր նիստը, որ նուիրված կը լինի Ընկերութեան պատւաւոր անդամ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐԻ
գիւղատնտեսական 30-ամեայ գործունէութեան։

ՆԻՍՏԻ ԾՐԱԳԻՐԸ.
1) Ընկերութեան ընդհանուր ժողովի որոշումը Ալ. Քալանթարի յոբելեանը տօնելու հարցի մասին.
2) Ա. Աթանասեանի զեկուցումը.
3) Գ. Շահինեանի զեկուցումը.

Բոլոր այն հիմնարկութիւնները և անձերը, որոնք կը ցանկանան շնորհաւորել Ալ. Քալանթարի գիւղատնտեսական գործունէութեան յոբելեանը, հրաւիրվում են այդ մասին վաղօրօք յայտնել Ընկերութեան Խորհրդին։

(ա. օ.) (առ.) 1247. 3—1

Հասարակ փաթեթներով

Ծխախոտի ոչ մի ֆաբրիկա չէ կարող մրցել՝ ՅԱՏԿՈՒԹԵԱՆ
կողմից՝ վերջերս բաց թողնված պապիրօսների հետ—
ДРУЖБА
ԵՒ
ТОВАРИЩЪ 20 ՀԱՏԸ 5 ԿՈՊ.
ԱՄԵՆ ՕՐ ՍՊԱՌՎՈՒՄ Է
200,000 ՀԱՏ
Վաճառվում է ամենուրեք
ԾԽԱԽ. ՖԱԲՐ. Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ և ՈՐԴԻՔ.
(հ. կ.) առ. 1222. 10—3

Յատկութեան բարձր տեսակի

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
Զուբալովի անուան
ԺՈՂՈՎՐԴ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ. ԿԱԶՄԱԿԵՐՊ.
Հայկական սեկցիա
Հինգշաբթի, նոյեմբերի 19-ին
Հայ դրամ. ընկ. թատերասէրների խումբը
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ ;
Ֆ. Շիլլերի ծննդեան 150-ամեակի
առիթով
կը ներկայացնէ
„Խարդաւանք եւ սէր"
Ողբերգ. Շիլլերի, 5 գործ. 7 պատկ., թարգմ. Շիրվանզադէի։
Ներկայացումից առաջ կը կարդացվի Շիլլերի կենսագրութիւնը։
Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին
Տեղերի գները 5-ից մինչև 50 կոպ.
Ռեժիսսեօր՝ Սևումեան
առ. 1244. 1—1

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1.
(երեկոյեան ժ. 5—7.
Երևանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1.
(ե. հ. կ.) (առ.) 1045. 100—26

ԲԺՇԿԱՊԵՏ
Ն. Ս. ՕՐԷՄԲՕՎՍԿԻ
Կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր՝ երեկ. ժամը 4—7-ը։ Պետրոս Մեծի փողոց, № 26, գեներալ-նահանգապետի դիւանատան դիմաց։
(ե. հ. կ.) (առ.) 1217. 11—4

ԿՐԹԱԿԱՆ ՖՕՆԴ

III

Հայ մատաղ սերնդի և ազգային ժողովրդական կրթական գործի կազմակերպութիւնը, ղեկավարութիւնը առաջ տանելու և զարգացնելու միակ հնարաւոր միջոցը, ինչպէս ասացինք, ազգային ընդհանուր կրթական ֆօնդ հիմնելն է։

Ո՞րտեղ պէտք է հիմնել և ո՞ւմ հսկողութեան կամ տնօրէնութեան ներքոյ պէտք է գտնվի ընդհանուր կրթական ֆօնդը։

Կրթական ընդհանուր ֆօնդ հիմնելու գաղափարը նոր չէ. յաճախ այդ հարցը արծարծվել և դրվել է հրապարակի վրա, յաճախ ծրագիրներ են առաջարկվել, թէ ի՛նչ ձևով իրագործել ֆօնդը։ Խրիմեան կաթողիկոսի մահվան առիթով Էջմիածնում հաւաքված մի խումբ անձինք նոյն իսկ փորձ արին «Հայրիկեան ֆօնդ» անունով այդպիսի մի ֆօնդ հիմնել, բայց նա չը կարողացաւ իրագործվել, որովհետև գործի գլուխ կանգնեցին ոչ ձեռնհաս անձեր։ Վերջերս արտասահմանում՝ Եգիպտոսում հիմնված Հայկական Ընդհանուր Բարեգործական Միութիւնը շատերի կողմից նկատվեց իբրև մի այնպիսի հաստատութիւն, որ ձեռնհաս է կանգնել այդ գործի գլուխ։

Անշուշտ, Եգիպտոսի Հ. Ը. Բ. Միութիւնը մի պատկառելի և միանգամայն վստահելի հաստատութիւն է, բայց նա չէ այն կենտրօնական և ընդհանուր հայութիւնից ճանաչված մարմինը, որ կարողանար պաշտօնապէս լինել ղեկավար և տնօրէն զանազան երկիրների հայութեան կրթական գործի։

Հայկական ընդհանուր կրթական ֆօնդը պէտք է դրված լինի պաշտօնական, միանգամայն լեգալ հողի վրա, բացառապէս ծառայէ հայ մատաղ սերնդի կրթութեան գործին։

Եւ միակ կենտրօնը, միակ հաստատութիւնը, որ կարող է գործի գլուխ կանգնել, լինել ընդհանուր ղեկավար, տնօրէն, որին ամբողջ հայութիւնը վերաբերվի վստահութեամբ և հաւատով,—դա ամենայն հայոց կաթողիկոսութիւնն է։

Ուրեմն ընդհանուր կրթական ֆօնդը պէտք է հաստատվի Էջմիածնում կամ Թիֆլիսում, բայց անպատճառ Ամենայն Հայոց Կաթողիկոսի իրաւասութեան և տնօրէնութեան ներքոյ, որ կը ղեկավարէ գործը ընտրեալ ձեռնհաս և կարող մի յանձնաժողովի ձեռքով, որի մէջ ներկայացուցչութիւն կունենան Ռուսաստանի, Թիւրքիայի, Պարսկաստանի հայ ժողովուրդները և որին կը նախագահէ ինքն Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Եւ ընդհանուր կրթական ֆօնդի կազմութեանը պէտք է մասնակցեն ի սփիւռս աշխարհի տարածված հայերը ազգային տուրքով, նուէրներով, կտակներով։

Ֆօնդը պէտք է դրվի այնպիսի հիմունքների վրա, որ լինի անձեռնմխելի և միանգամայն ապահով որևէ վտանգից, որպէսզի չը կրկնվեն այն դէպքերը, որոնք յաճախ տեղի են ունեցել և մանաւանդ Խրիմեանի օրով, երբ բազմաթիւ դրամական նուէրներ տրված կաթողիկոսներին, իբրև ընդհանուր հայութեան հոգևոր պետերի, ազգային, կրթական և այլ լուսաւորական նպատակների համար, անհետացել են։

Մեզ թւում է, որ ներկայ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ իր յատկութիւնների պատճառով վայելում է ընդհանուր հայութեան կողմից վստահութիւն և հաւատ, կարող է հէնց այժմ իր առաջին գործերից մինը շինել կրթական ֆօնդի կազմութիւնը, և մենք հաւատացած ենք, որ հայ ժողովուրդը որքան էլ ճնշված, որքան էլ սրտաբեկված՝ բայց արձագանք կը տայ իր եկեղեցու Պետի առաջին հրաւէրին՝ միանալու և կազմելու ազգային ընդհանուր կրթական գործի բարգաւաճման համար մի մեծ ֆօնդ։

Կրթական ֆօնդը կազմելու հետևանքներից մինն էլ այն պէտք է լինի, որ Էջմիածնի ճեմարանը միանգամայն պէտք է վերակազմվի և դառնայ նախամեծարապէս ձեռնհաս և կարող ուսուցիչներ ու դաստիարակներ պատրաստող մի հաստատութիւն ընդհանուր հայութեան համար։ Դրանով հայ ապագայ սերնդի տարրական կրթութեան գործը կը ստանայ որոշ և նպատակայարմար ուղղութիւն և բովանդակութիւն։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 17 նոյեմբերի

Ցերեկվայ ժամը 2-ին Ստարի Դերևնի և Լախտի միջև կայացաւ մենամարտ ատրճանակներով Դումայի անդամներ կոմս Ուվարօվի և Գուչկօվի միջև։ Ներկայ էին սեկունդանտներ կոմս Օլսուֆիեվ, Լվօվ 2-րդ, Կրուպենսկի և բարօն Մէյենդորֆ։ Հակառակորդները 25 քայլ հեռաւորութեան վրա կրակեցին միաժամանակ։ Գուչկօվի գնդակը խրվեց կոմս Ուվարօվի աջ թիակի մէջ և հասցրեց սայթաքուն վէրք։ Գուչկօվը անվնաս է։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 17 նոյեմբերի

Ներքին գործերի մինիստրութեան մէջ հարց է յարուցված վերակազմելու պետութեան սահմաններում ապրող հայ-կաթօլիկների եկեղեցական կառավարութիւնը։ Հարցի քննութեանը մասնակցելու է հայ-կաթօլիկների առաջնորդ Տէր-Աբրահամեանը։ (Հ. Գ.)

Բեռլին, 17 նոյեմբերի

Պալատի Սպիտակ դահլիճում հանդիսաւորութեամբ բացվեց Ռէյխստագի նոր նստաշրջանը։ Կայսրը կարդաց գահական ճառը։ Եռապետեան դաշնակցութեան մասին յիշատակելու ժամանակ լսվեցին բացագանչութիւններ «բրաւօ՛»։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 17 նոյեմբերի

Այսօր բանտում կախվեց ուսանող Կօնստանտին Գիլեվիչը, որ մեղադրվում է Լեշտուկօվի փողոցում կատարված սպանութեան գործի առիթով։ (Հ. Գ.)

Միւնխէն, 17 նոյեմբերի

Վախճանվեց յայտնի ականաբոյժ դուքս Կարլ Տէօդօրը։ (Հ. Գ.)

Լոնդօն, 17 նոյեմբերի

Լօրդերի պալատ։ Ֆինանսական բիլլի յետագայ քննութեան ժամանակ Մօրլէյ, Ռօզբիրի, Սվօլինս, Գիրֆօրդ ճառեր արտասանեցին Լէնդզօունի բանաձևի դէմ։ (Հ. Գ.)

Ստաւրօպօլ, 17 նոյեմբերի

Նահանգապետը Լիվադիայից՝ Թագաւոր Կայսրից ստացաւ հետևեալ հեռագիրը. «Հաղորդեցէք կալմըկ ժողովրդի ներկայացուցիչներին Իմ շնորհակալութիւնը Ինձ հպատակութիւն յայտնելու համար։ Հաւատում եմ կալմըկների ամենահպատակ զգացմունքներին և սրանց ցանկանում եմ նրանց առաջադիմութիւն ապագայում։ ՆԻԿՕԼԱՅ»։ (Հ. Գ.)

Պետերբուրգ.— Կառավարական շրջաններում մինիստրների խորհրդի նախագահի մերձաւոր մասնակցութեամբ մշակվում է մի օրինագիծ Ֆինլանդիայի մասին։

Պետական Դումայում շուտով հանդէս է գալու ներքին գործերի մինիստրի օգնական գեներալ Կուրլօվը անձի անձեռնմխելիութեան օրինագծի առիթով։

Ֆինանսների մինիստր Կոկօվցևը և առևտրի ու արդիւնաբերութեան նախկին մինիստր Տիմիրեազևը մեկնեցին Լիվադիա։

Պետական Դումայի անդամ Գուչկօվը հեռացվեց նացիօնալիստների ֆրակցիայից։ («Б.»)

Օդեսսա, 17 նոյեմբերի

Պարսից հիւպատոս Զայչենկօն կրկնակի սպառնական նամակներ ստացաւ 7000 րուբլու պահանջով յօգուտ անիշխանական-կոմմունիստների։ Ոստիկանութիւնը պայմանաւորված տեղում ձերբակալեց երկու կոմմունիստների։ (Հ. Գ.)

Հաագա, 17 նոյեմբերի

Պատգամաւորների պալատում արտաքին գործերի մինիստրը կտրականապէս յայտնեց, որ Հիւսիսային ծովի մասին կապված համաձայնութիւնը պայմանաւորված պետութիւնների վրա ոչ մի զինուորական բնաւորութեան պարտաւորութիւն չէ դնում և հանդիսանում է սոսկ կօնվենցիա status qu-ն Հիւսիսային ծովում պահպանելու մասին։ (Հ. Գ.)

Սիդնէյ, 17 նոյեմբերի

Օրէնսդրական ժողովում հասարակական աշխատանքների մինիստրը հաղորդեց, որ կառավարութիւնը վճռել է անմիջապէս միջամտել լեռնային բանուորների գործադուլին, եթէ մի քանի օրում չը լուծվեն վիճելի հարցերը։ (Հ. Գ.)

Աթէնք, 17 նոյեմբերի

Տիպալդօսի բարձրացրած ապստամբութեան գլխաւոր դրդիչները յանձնվեցին երդուեալների դատարանին։ (Հ. Գ.)

Վարշավայում Նօբէլ և Մազութ ֆիրմաները միանգամից բարձրացրին կերօսինի գինը՝ պուդին 25 կոպէկ։ («Б.»)

«Гол. Москвы» թերթի Պարիզի թղթակիցը հեռագրում է. «Հանրապետութեան նախագահ Ֆալիէրն իրան այն աստիճան վատառողջ է զգում, որ մտադիր է հրաժարվել իր կոչումից։ Քաղաքական շրջաններում ասում են, որ ապագայ ընտրութիւններին ամենաշատ շանս ունի նախկին նախագահ Լուբէն»։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 17 նոյեմբերի

Կազմվեց նոր կաբինէտ. արդարադատութեան մինիստր նշանակված է Մունիր-ուդ-Դովլէ, ֆինանսների՝ Վուսուկ-ուդ-Դովլէ։ Իր կոչման մէջ հաստատված խնամակալը այսօր կընդունէ դիպլօմատիական մարմինը։ (Հ. Գ.)

Նախիջևան, 17 նոյեմբերի

Մակուի խանութեան մէջ երկպառակութիւններ են։ Իր ազգայնականների ձեռքով սպանվել է Մակու քաղաքի ոստիկանապետ Իսադուլլա-խանը։ (Հ. Գ.)

Մօսկվա.—«Рус. Сл.»-ին հեռագրում են Լօնդօնից. «Այն լուրերը, իբրև Ռուսաստանը մտադիր է Պարսկաստան ուղարկվելիք պատժիչ զօրամասի թիւը հասցնել մինչև հինգ հազար մարդու, պարսիկների մէջ յուզմունք և գրգռում է առաջ բերում։ Նրանք պնդում են, որ այդպիսի գործողութիւններով ռուսաց կառավարութիւնը փաստում է. շահսէվաններին զինաթափ անելու և պատժելու պատրաստութիւններին։ Ձեռքից ձեռք է անցնում մի լուսանկար, որի մէջ նկարված են ռուս օֆիցէրներ Ռահիմ խանի հետ միասին»։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Բեռլինի դատարանը շուտով քննելու է մի շատ հետաքրքրական գործ. դա նախկին սուլթան Աբդուլ Համիդի գանգատն է գերմանական կայսերական բանկի դէմ։

Բանը նրա մէջ է, որ նախկին սուլթանը ընթացիկ հաշւով մօտաւորապէս 16 միլիօն ֆրանկ ունէր գերմանական կայսերական բանկում։ Երբ սուլթանը պահեստի դրեց բանկում այդ գումարը, բանկը պարտաւորութիւն յանձն առաւ այդ գումարը վերադարձնել այն դէպքում միայն, եթէ այդ գումարը վերադարձնելու պահանջի վրա կը լինի ոչ միայն սուլթանի ստորագրութիւնը, այլ և առանձին կնիք, որը սուլթանի մօտ էր պահվում և որի դուբլիկատը ուղարկված էր բանկին փողի հետ միաժամանակ։ Սակայն յեղափոխական օրերում Կ. Պօլսում սուլթանը կորցրեց կնիքի իսկականը և մինչև այժմ չը կարողացան գտնել։ Այդպիսով այժմ Աբդուլ Համիդը հնարաւորութիւն չունի այդ կնիքը դնել փողերը պահանջելու համար։ Նա մի քանի անգամ դիմել է կայսերական բանկին՝ պահանջելով դրամները, բայց բանկը, կապված լինելով գրաւոր պարտաւորութեամբ, մերժում է յանձնել փողերը։ Ուստի սուլթանը հաւատարմաթուղթ տուեց Բեռլինի փաստաբաններից մէկին՝ դատ սկսելու բանկի վարչութեան դէմ։ Դրա հետ կապ ունէր Բեռլինի թիւրքաց դեսպանի նորերս Կ. Պօլիս գնալը։

«Гол. М.»-ին Կ. Պօլսից հեռագրում են, որ թիւրքական զօրախաղերին եկել է ներկայ գտնվելու գերմանական կայսրի որդի Օսկարը իր շքախմբով։ Արքայազնի ներկայութիւնը անպաշտօն է։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ

Սկսած երկու շաբթի օրվանից համագումարի նիստերը անընդհատ շարունակվում են։

Մինչև այս ժամ կայացել են 6 նիստ՝ 4-ը գինեգործութիւնից, 2-ը կաթնատնտեսութիւնից։

Գինեգործութեան համար նշանակված էր սկզբում միայն 3 նիստ։ Բայց որովհետև առաջին նիստերում խօսակցութիւնները ձգձգվեցին և բոլոր պարապմունքները չը վերջացան, ուստի նշանակվեց չորրորդ նիստ, որ տեղի ունեցաւ երէկ առաւօտեան։

Գինեգործական սեկցիայի նիստերը կատարվում էին Ի. Անդրօնիկովի նախագահութեամբ։

Գինեգործութեան սեկցիան, լսելով Պիլենկօյի «Այն պատճառները, որոնք արգելում են խաղողի գինու վաճառման, և նրանց առաջն առնելու միջոցները», Եգօրօվի՝ «Գինու երկու տեսակ» և Մչեդլիշվիլու՝ «Կախէթի գինու տիպի մասին և գինու ճգնաժամի» զեկուցագրերը, բուռն վիճաբանութիւններից յետոյ ընդունեց այս բանաձևը. «Նկատի առնելով, որ գինի պատրաստելու գոյութիւն ունեցող միջոցները Կախէթիայում կախման դրութեան մէջ են տեղական շուկայի պահանջներից և տնտեսական պայմաններից, սեկցիան անցանկալի է համարում արմատապէս վերափոխել Կախէտիայում գինեգործութեան այժմեան տեխնիկան և աւելի նպատակայարմար է գտնում աստիճանաբար փոփոխել այդ ձևերը գիտական-փորձնական հետազօտութիւններով, համաձայնեցնելով տեղական շուկաների պահանջներին»։ Կախէթիան այդ իսկ պատճառով կարիք ունի գինեգործութեան կայարանի փորձնական հաստատութեան, որը կենտրոն պիտի լինի այդ հետազօտութիւնների համար։

Ամսիս 17-ի երեկոյից սկսվեցին կաթնատնտեսական սեկցիայի պարապմունքները Ա. Քալանթարի նախագահութեամբ։

Այդ նիստերը, միացած սերզատ մեքենաների ցուցահանդէսի և կաթնատնտեսական փորձերի հետ, գրաւիչ են հանդիսանում գիւղատնտեսների համար, ուստի մեծ բազմութիւն էր հաւաքվել թէ նիստերին և թէ փորձերին։

Կաթնատնտեսական սեկցիայում առաջին զեկուցումը կարդաց Ա. Քալանթարը, որը ծանօթացրեց ժողովի անդամներին նախկին համագումարի որոշումների հետ և առաջ մղեց անասնաբուժական և կաթնատնտեսական յատուկ կոմիտէտ հիմնելու ծրագիրը։

Ժողովականները նպատակայարմար գըտան այդպիսի կոմիտէտ հիմնելը և ընդունեցին ծրագիրը ամբողջապէս, մտցնելով խմբագրական փոփոխութիւններ։

Գ. Շադինեան կարդաց մի ընդարձակ զեկուցում, զարդարված վիճակագրական տեղեկութիւններով և գործնական ցուցումներով։ Շադինեանը իր զեկուցման մէջ պաշտպանում է կաթնատնտեսական կըրթութեան տարածման գաղափարը, մանր կրեդիտի կարևորութիւնը կաթնագործների համար ու ընկերակցութիւնների կազմակերպութեան կարևորութիւնը։

Վիճաբանութիւնից յետոյ ժողովականները ընդունեցին զեկուցման կէտերը։

Այնուհետև Ա. Թամամշեան կարդաց կաթի և նրա արդիւնքների գիտնական և գործնական հետազօտութիւնների նշանակութեան մասին։

Ժողովը կարևոր գտաւ տարածել հետազօտութեան մասին գիտելիքները հասարակութեան լայն խաւերի մէջ։

Միւս զեկուցումների մասին կը խօսենք։

**

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Հարկաւոր ենք համարում յայտնել այն, որ յօբելեանի օրը, նոյեմբերի 21-ին, երեկոյեան մուտքը յօբելեանական հանդէսին ազատ է լինելու համակրողների և շնորհաւորել ցանկացողների համար։

—

Ի գիտութիւն մեզ եկած բազմաթիւ դիմումների և հարցմունքի, պարտք ենք համարում յայտնել, որ առանձին հրաւէրներ Գիւղատնտեսական Ընկերութեան կողմից հայկական և զանազան հասարակական-կըրթական հիմնարկութիւններին՝ մասնակցել Ալ. Քալանթարի յօբելեանին, չէ լինելու, որովհետև Գիւղատնտեսական Ընկերութիւնը ընդհանուր ձևով հրաւէր է արել հասարակութեան և հիմնարկութիւններին։

ՊԷՏՔ Է ՇՏԱՊԵԼ

Ինչպէս տեսնում ենք, օծումից անմիջապէս յետոյ՝ Վեհափառը մտնելով իր գործունէութեան մէջ՝ ընթացք է տալիս այն հերթական հրատապ հարցերին, որոնք այսքան ժամանակ սպասում էին նրան։

Այդպիսի հրատապ և կարևոր հարցերից մէկն է հանդիսանում այսօր նաև Աստրախանի Թեմական դպրոցի կնճռոտ, ձգձգված հարցը, որ մինչև օրս չէ ստանում իր լուծումը։ Եւ այսօր ահա ես նորից «Մշակի» միջոցով հրապարակի վրա եմ դնում այս հարցը, համառօտ կերպով յիշեցնելով ընթերցողներին, մի քանի անգամ արդէն կրկնված, գործի դրութիւնը և խնդրելով Վեհափառ Կաթողիկոսի բարեհաճ ուշադրութիւնը այս գործի դրութեան վրա։

Ահա չորրորդ տարին է, որ բացված է Աստրախանի Թեմական դպրոցը, սակայն նա մինչև օրս կառավարվում է երկու պատրաստական դասարաններով, որոնց մէջ կան այժմ միայն 20 աշակերտ։

Մինիստրութիւնը, ինչպէս արդէն յայտնի է, չը նայելով մեր բազմիցս դիմումներին, չէ թոյլ տալիս աւելի դասարաններ բաց անել, մինչև որ դպրոցի կանօնադրութիւնը պատշաճաւոր կերպով չը հաստատվի. և կանօնադրութիւնը պէտք է կազմվի Նոր-Նախիջևանի Թեմական դպրոցի կանօնադրութեան համաձայն, պլիւս՝ Ստոլիպինի պահանջած կէտերը։

Եւ հէնց այդ պահանջների համաձայն իր ժամանակին կազմվեց կանօնադրութիւն և ուղարկվեց հանգուցեալ կաթողիկոսին, որպէսզի վերջինս էլ ներկայացնէ մինիստրութեանը. սակայն հէնց այդ ժամանակները կաթողիկոսը վախճանվեց և կանօնադրութիւնը մնաց դիւանում առանց ընթացք ստանալու։

Այնուհետև դպրոցը կառավարող մասնաժողովը, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնը և հաստատութիւնը կը տևի առնուազն երկու տարի, դիմեց տեղակալին նախ՝ գրաւոր և ապա յատուկ պատգամաւորների միջոցով, որպէսզի տեղակալը, աչքի առաջ ունենալով այդ բացառիկ հանգամանքը և այն բարոյական և նիւթական վնասները, որ կրում է դպրոցը՝ յաջորդաբար դասարաններ բաց չանելով և որ դպրոցին փակման վտանգ է սպառնում, ինքը իր կողմից ներկայացնէ կանօնադրութիւնը մինիստրութեանը՝ հաստատելու։ Տեղակալը, համարելով այս գործը կաթողիկոսութեան իրաւասութեանը պատկանող, բացէ ի բաց մերժեց և այսպիսով կանօնադրութիւնը մնաց չը հաստատված։

Ահա գործի համառօտ դրութիւնը։

Եւ մինչև օրս ահա այս գործը մնում է նոյն դրութեան մէջ՝ ամեն յոյս դրված լինելով նորընտիր Կաթողիկոսի վրա։

Այժմ, ինչպէս սկզբում ասացի, երբ Վեհափառը սկսել է իր գործունէութիւնը, պէտք է անպատճառ շտապեցնել և մեր այս Թեմական դպրոցի գործը, որպէսզի գոնէ այս ձմեռվայ ընթացքում կարելի լինի հաստատել տալ կանօնադրութիւնը։

Պէտք է տեսնել թէ ինչ խղճալի դրութեան մէջ է գտնվում մեր այդ «Թեմական» անունը կրող դպրոցը. այս տարի ուղղակի արհեստական կերպով, այստեղից-այնտեղից հաւաքած աշակերտներով է պահպանում իր գոյութիւնը։

Հոգաբարձութիւն 7 հոգուց բաղկացած, ուսուցչական խումբ, գեղեցիկ հոյակապ շէնք բոլոր յարմարութիւններով և... 20 աշակերտ...

Առանց այն էլ աստրախանցիներից չը սիրված, արհամարհված հայ դպրոցը այնպիսի անաջող ընթացք ունեցաւ, որ կարծես թէ հաստատեց մեր ժողովրդին իր սխալ կարծիքների մէջ և այժմ մի տեսակ ընդհանուր հիասթափութիւն է տիրում դէպի այդ դպրոցը։

Գալով Թեմի քաղաքներին, պէտք է ասած, որ նրանք ևս չեն հետաքրքրվում այս դպրոցով. քիչ է այդ. մինչև անգամ մի տեսակ խուլ հակակրութիւն է նկատվում...

Եթէ Թեմի քաղաքներում խուլ կերպով արծարծում են զանազան սկզբունքային հարցեր, որ անշուշտ կը լինեն, ինչպէս օր. դպրոցի տեղափոխութեան, աշակերտների քիչ կօնտինգենտ ունենալու և այլն, թող հէնց այժմեանից նրանք հրապարակ կան և արծարծվեն, որպէսզի կարելի լինի ժամանակին դնել Թեմական ժողովի առաջ։

Իսկ մինչև այդ՝ պէտք է ամեն կերպ աշխատել գործը շտապեցնել՝ հրաւիրելով այս գործի վրա Վեհափառ Կաթողիկոսի բարեհաճ ուշադրութիւնը։ Ս. ք. Ասլանեանց

Աստրախան, 1 նոյեմբ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ախալքալաք, 16 նոյեմբերի

Մեր Արագվա գիւղը, որ սրանից մի քանի տարի առաջ յայտնի գիւղ էր գաւառումս, այժմս ամենախայտառակ անբարոյական գիւղ է դարձել. ինչեր ասես որ այդ գիւղում չեն կատարվում. բռնութիւն, գողութիւն, սպանութիւն, ամուսնանդ բռնի աղջիկ փախցնել. և այս բոլոր վատութիւն անողները մնում են անպատիժ. չը կայ ոչ մեծ, ոչ փոքր և ոչ ազդեցիկ դատաւոր։ Գիւղի ամեն մի երիտասարդ օր ցերեկով չուստիկում ունի պահած Ֆիննական դանակ և կողքին քաշ արած մի ատրճանակ։ Ժամը 7-ը եղաւ թէ չէ՝ այլևս ոչ ոք չը պիտի համարձակվի իր դուռը բաց թողնել. ստիպված է փակել, եթէ ոչ իսկոյն կողոպտում կամ եթէ աղջիկ ունի՝ փախցնում են։ Այս ամիսներում 10 աղջկից աւելի են բռնի փախցրել, որոնցից մէկը հետևեալն է։ Մեր համագիւղացի Երեմիա Այվազեանցի, որ մի պատուելի, յայտնի, բարոյական, 67 տարեկան ծերունի է, զրկվելով իր ամուսնուց և մի քանի տղաներից, միակ յոյս և ապագան էր իր 14-ամեայ փոքրիկ Իւղաբերը։ Ժամը 7-ին ծերունին դռները պինդ փակած նստած է եղել իր սենեակում, մէկ էլ երդիկից ձայն է տալիս Յակոբ Գրգեանցը. «Երեմիա-կատա, դուռը բաց արա. մեղը պիտի գնեմ, որ վաղը Թիֆլիս տանեմ»։ Միամիտ ծերունին ոչինչ չը նկատելով միամտաբար դուռը բաց է անում, լաւ հիւրասիրում և խօսակցութիւն անում մինչև ժամը 10-ը։ Նրա գնալիս՝ փոքրիկ Իւղաբերը ճրագը վառում է, որ Գրգեանցին ճանապարհ դնէ. դուռը բաց անելիս յանկարծ նոյն հացուբաց դաւաճան Գրգեանցի ընկերները, որ գաղտնի դարան մտած են եղել, յարձակվում են խղճալի աղջկայ վրա, մազերից քաշ տալով և բերանը չուլ կոխելով քաշկռտելով փախցնում. աղջիկը մթութեան մէջ կանչում է. «Հայրիկ, օգնիր ինձ, տարան»։ Ապշած ծերունին դողդողալով դիմում է առաջ. սրան բռնելով դաւաճան Գրգեանցը մի հարուածով գլորում է ցած՝ երկու սաժէն խորութեամբ խրամատում մեծ-մեծ քարերի վրա. Թշուառ ծերունու կողքերը ջարդվում են։ Գրգեանցը վերադառնում է ծերունու տունը, 185 րուբլի և ուրիշ շատ բաներ յափշտակում և անյայտ է լինում։ Այժմս ցաւալի ծերունին անկողնում ընկած անօգնական ու անմխիթար միայնակ տառապում է, իսկ աղջիկը տանում են Տրկնա գիւղը։ Այժմս գործը ինչ հետևանք պիտի ունենայ, դա էլ մեր բարի գիւղացիների բարեհայեցողութիւնից է կախված։ Արդեօք ե՞րբ պիտի այս տեսակ խայտառակութիւններին վերջ դրվեն։

Տեղացի

—

Դիլիջան, 12 նոյեմբերի

Անցեալ անգամ յիշել էի, որ կողոպտել են Ասլանեանի և տ. Բաղալեանի խանութները։ Շտապում եմ յայտնելու, որ ապրանքը գտնվեց մի հին արտաքնոցում դարսած։ Մեղաւորները ապրանքատէրերի ծառաներն էին։ Մեղաւորներից մէկը, չը կարողացայ իմանալ ինչու, քննութեան ժամանակ վիրաւորվել է, բայց թեթև։ Ամբողջ ժողովուրդը ուրախութեան մէջ է, որ իրանց խաղաղ կեանքը խանգարողները և իրանց անունը վարկաբեկողները գտընվեցին։ Չը նայած ոստիկանութեան ունեցած աջողութեանը, մի քանի օր առաջ կողոպտել են երկու խանութ ևս, մոլոկանների գիւղում։ Դիլիջանում այժմ խօսակցութեան առարկան իմ նախկին մի յօդուածն է, որ առաջ է բերել համակրողների ու հակակրողների մեծ խմբակներ։ Ցաւելով պիտի յայտնեմ, որ հակառակ կողմը, օգտվելով ժողովրդի տգիտութիւնից, սխալ բացատրութիւն է տալիս յօդուածիս և լարում կրքերը։

Ծանր է գաւառական թղթակցի դերը։ Նա հնարաւորութիւն չունի իր իսկական անունով ճշմարտութիւններ ասելու և յաճախ ուրիշների վրա էլ կասկածներ է գցում։ Ես լսում եմ, որ շատ մարդիկ իմ յօդուածս վերագրում են տեղիս դպրոցի աւագ ուս. Մ. Աւետիսեանին։ Թէև խըմբագրութիւնդ հերքել էր այդ կասկածը, բայց դա վերջ չը դրեց քփսուկներին։ Սրանով յայտնում եմ, որ անմեղ մարդու վրա ի զուր չը խօսեն. նա ոչ մի մասնակցութիւն կամ տեղեկութիւն չունի յօդուածից. իր ժամանակին, եթէ կարիքը ստիպի, ես անձամբ դուրս կը գամ իմ ասածներս հաստատելու։ Զարմանալի է, թէ ինչո՞ւ մարդկանց հետաքրքրում է անձնաւորութիւնը և ոչ փաստերը։ Հարևան

—

Սևաքար (Ղափան), 18 նոյեմբերի

Այս տարի ևս Արամազդ ընկ. միջոցներով Սևաքարի ուսումնարանի գոյութիւնը պահպանվեց։ Կարդում են բաւական թւով աշակերտներ ու աշակերտուհիներ։ Ուսուցիչը, որ արդէն երկրորդ տարին է, ինչ պաշտօնավարում է մեզանում, մի համեստ անձնաւորութիւն է և բաւական լաւ է տանում իր գործը։ Բայց այդ բոլորով հանդերձ, դժբաղդաբար Սևաքարում չը կայ մի կանոնաւոր շինութիւն, որտեղ կարելի լինի գէթ մի քանի ամիս սովորեցնել աշակերտներին։ Երբեմն շինութեան խարխլուլութեան պատճառով յաճախակի տեղացող երկարատև անձրևներից կաթիլք է առաջանում, որից ստիպված են լինում դադարեցնել ուսումը, մինչև անձրևները կը դադարեն։ Երբեմն էլ պատահում է, որ սենեկատէրը, ինչ-ինչ պատճառներով մէկն ու մէկից վիրաւորված, գալիս է ու ասում.

— Օզում չեմ ախպէր, դուրս տարէք ստադաս ձեր ստոլ մատոլը. էդ ալ իմ պատիւս ա...

Այս բոլոր անյարմարութիւնները տեսնելով, սևաքարցիները երեք տարվայ ընթացքում ոչ միայն չը կարողացան ուսումնարան շինել, այլ նոյնիսկ մտքներիցն անգամ չեն անցկացնում։ Համբարձման տօնին (ս. թ.) հանգանակութիւն են կազմել ուսումնարանի անունով, որը մեծամասնութեամբ դեռ ևս ապառիկ է։ Իսկ երբ գիւղացիներին հարց է տրվում, թէ ինչո՞ւ իրանց ապառիկները չեն տալիս, նրանք պատասխանում են.

— Դէ լհա շկօլն էլ սհաթըս շինեցիք, շաղդայետ, մեզ էնքա զօր ունե՞նք, որ շկօլ շինենք։

Այդչափ երկրորդական նշանակութիւն ունի ուսումնարանը 150 տուն ունեցող մի գիւղի համար, որը դժբաղդաբար ցանկալի երևոյթ չէ։ Բաւական թւով աշխատաւորներ կան Բագւում, նրանք անգամ այդ մասին չեն մտածում։ Բ.

—

Սաչխերէթ, 15 նոյեմբերի

Ամսիս 10-ի, երեկոյեան ժամը 8 ին տեղս ժամանեց Կովկասի ուսումն. շրջանի հոգաբարձու Րուդօլֆը։ Կայարանում սպասում էին գիւղիս բոլոր պաշտօնական անձինք և ընտիր հասարակութիւն աղ ու հացով։ Երկրորդ օրը հոգաբարձուն այցելեց տեղիս հայոց եկեղեցական-ծխական դըպրոցը, ուր ընդունվեց աղ ու հացով։ Նա գիշերեց իշխանուհի Եղիսաբէթ Ծերեթելիի տանը, որտեղ պատրաստվեց ճոխ սեղան, որին մասնակցեցին նաև տեղիս ուսուցիչ-ուսուցչուհիները և բոլոր պաշտօնական անձինք։ Հացկերոյթի ժամանակ խօսեցին ճառեր և արծարծվեցին հարցեր, ի միջի այլոց և այն մասին, որ Սաչխերէթում հիմնվի չորս-դասեան դպրոց, որտեղից աւարտողը կարողանայ ազատօրէն մտնել Ճիաթուրիի եօթնամեայ դպրոցը, իբրև ամենամօտը գիւղին։ Հոգաբարձուն խոստացաւ թէ տղայոց և թէ օրիորդաց դպրոցները պետական դարձնելու առայժմ երկդասեան հինգ բաժանմունքներով։ Երկրորդ օրը հոգաբարձուն բարեհաճեց այցելել գիւղի բոլոր դպրոցները՝ թէ հայոց և թէ վրաց. ամենից առաջ սկսեց նա այցելել հայոց դպրոցը, որտեղ աւագ ուսուցիչ Մ. Սահաթեանց, ընդունելով հոգաբարձուին, ըստ պատշաճի սկսեց քննել աշ.-աշակերտուհիներին որտեղ մի ժամից աւել հոգաբարձուն մնալուց յետոյ՝ գոհ և ուրախ սրտով հեռացաւ դպրոցից, շնորհակալութիւն յայտնելով թէ աւագ ուսուցչին և թէ դպրոցի հոգաբարձութեան։ Սրտառուչ էր նամանաւանդ հոգաբարձուի հեռանալը Սաչխերէթից. կայարանում հաւաքված էին տեղիս բոլոր աշակերտ-աշակերտուհիները՝ թէ հայոց և թէ վրաց. երկաթուղին շարժվելուն պէս, սկսեցին կեցցէներ կանչել և ծաղիկներ նետել հոգաբարձուի վագօնը, իսկ հոգաբարձուն ամենքին սիրալիր մնաս բարև ասելուց յետոյ, կամաց կամաց վագօնը սլացաւ դէպի Ճիաթուր։

Գ. ք. Սօլաղեան

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԷՏՔ Է ԸՆՏՐԷ

Կօշմարի պէս ծանր տպաւորութիւն գործեց Ղազարոս Աղայեանի «Սկզբունքը խախտված» յօդուածը («Սուրհանդակ» № 28) ի պատասխան Համբարձում Առաքելեանի «Ամենից առաջ սկզբունքը» առաջնորդողի («Մշակ» № 240)։ Ըստ երևոյթին այս առաջնորդողի դէմ, որ հաճելի տպաւորութիւն թողեց շատերի վրա տեղումս, ոչինչ չէր կարելի առարկել, բայց Աղայեան գոհ չէ նրանից և իր ասելիքն առաջ տանելու համար առնուազն տարօրինակ տրամաբանութեան է դիմում։ Նա, ի նկատի առնելով այն տխուր հանգամանքը, որ մեր ժողովուրդն իր իրաւունքներից քիչ է օգտվում և անտարբեր վերաբերմունք է ցոյց տալիս դէպ հասարակական խնդիրները—այն է՝ հոգաբարձական, քահանայական, երեցփոխական և այլն ընտրութիւնները—ասում է. «Ճշմարիտն այն է, որ մեզանում ժողովրդական ընտրութիւն ոչ եղել է երբէք և ոչ կայ ներկայումս... Ուրեմն,—եզրակացնում է Ղ. Աղայեան,—էլի հազար անգամ լաւ է, որ հոգևոր բարձր պաշտօնեաների ընտրութեան գործը Նորին Վեհափառութիւնն իր ձեռքում պահէ և չը տայ ո՛չ ժողովրդին և ո՛չ միաբանութեան։ Եւ ահա այդ կը լինի ժողովրդի ընտրութիւն»։ Ցաւելով ենք արձանագրում, որ այստեղ ամեն ինչ կայ, բացի տրամաբանութիւնից։ Չափազանց տարօրինակ է. եթէ, ըստ Ղ. Աղայեանի, Եգիպտոսի կամ Բրուսայի ժողովուրդը Ռուսաստանից ընտրելով կաթողիկոսական պատգամաւորին, դրանով էլ խեղդվում է ժողովրդի ձայնը՝ նշանակում է ինքը Հայրապետն ևս ժողովրդական չէ, ուրեմն և նրա նշանակած առաջնորդն էլ ժողովրդական լինել չէ կարող։

XX դարում, որն իրաւամբ ժողովրդապետական և ռամկավարութեան դար կարելի է կոչել, հրաւիրել, որ ընտրող ժողովուրդը իր իրաւունքներից հրաժարվի յօգուտ իր ընտրեալի—սա մի այնպիսի աբսուրդ է, որ ոչ մի փոքր ի շատէ իրաւագիտութեան հետ ծանօթութիւն ունեցող մարդ հասկանալ չէ կարող։ Եթէ ժողովուրդն ընտրում է, նշանակում է՝ նա է ամենից բարձրագոյն իշխանութեան տէրը և տնօրէնը. ապա ինչպէս պէտք է այդ ընտրող ժողովուրդն իր ընտրեալին միահեծանութիւն տայ և, լիկվիդացիայի ենթարկելով իր բոլոր իրաւունքները, պէտք է իր Հայրապետին ասի՝ «Դու այսօր նշանակեր առաջնորդ, վաղն էլ երեցփոխ, հոգաբարձու և քահանայ կը նշանակես. այսինքն սահմանադրութիւնից դիմիր դէպի բռնապետական կառավարութիւնը»։ Մեզ թւում է, որ հայ ժողովրդի և հայոց եկեղեցու համար՝ սրանից աւելի մոլեգին հարուած պատրաստել անկարելի է։ Ճշմարիտ է, մեր մէջ ընտրական գործը սաղմային վիճակի մէջ է, մեր ժողովուրդը չէ օգտվում նրանից, բայց այդ առաջ է գալիս ոչ միշտ անգիտակցութիւնից, այլ նրանից, որ վերջին տարիներում մեր գիւղացիութեան և միջակ դասակարգի դրութիւնը չափազանց ծանր էր, նրա իղձ-ֆիքը ստամոքսի հարցն էր, քաղաքական և տնտեսական պայմանները իսպառ ջլատեցին նրա ոյժերը, և նա հնարաւորութիւն չունէր հասարակական գործերով զբաղվելու. սովածին ամենից առաջ հաց։ Ահա թէ ինչո՞ւ մեր ժողովրդի մի մասը չէ օգտվել իր իրաւունքներից. իսկ ասել, թէ «մեր ժողովուրդը մի քահանայ, մի գիւղապետ ընտրելու ոչ հասկացողութիւն և ոչ առաքինութիւն ունի», սա թիւրիմացութիւն է։ Ռուս բիւրօկրատիան ևս այդպէս էր մտածում, երբ 1905 թ. կազմում էր Պետական Դումայի ընտրական կանօնները. նա կարծում էր, թէ գեղջուկը պիտի կազմի պետական կօնսերվատիզմի բուն հիմնաքարը. սակայն նա սխալվեց. I և II Դումաները ցոյց տուին, որ գիւղը գիտէ օգտվել իր իրաւունքներից և ճանաչում է իր չարն ու բարին. երկու Դումաներում ևս գիւղացիութիւնն էր կազմում խիստ օպպօզիցիան։ Բայց մի րոպէ ենթադրենք, թէ յիրաւի մեր ժողովուրդը ոչ հասկանում և ոչ հետաքրքըրվում է ազգային գործերով և թէ ժողովներն առաջ են տանում միայն 20 հոգի ու ընտրում՝ որին և կամենում. նախ՝ այսպէս է նաև ռուսական ընտրութիւնների ժամանակ և երկրորդ՝ դրանից աւելի քիչ վնաս կայ, քան այն առաջարկութիւնից, որ Աղայեանն է անում։ Աքսիոմա է, որ 20 հոգին աւելի քիչ դէպքերում կը սխալվեն, քան 1-ը. և ոչ ոք իրաւունք չունի հէնց այդ 20 հոգուն ձայնից զրկելու, եթէ նրանք հետաքրքրվում են մեր գործերով։ Չէ կարելի դէպի հասարակական գործերն անտարբեր լինել, իսկ յետոյ մեղադրել նրանց, որոնք ցանկանում են գործ առաջ տանել. «Երբ ես եմ ձի գողանում՝ այդ կարելի է, իսկ երբ իմ ձին են գողանում՝ այդ կարելի չէ, այլև յանցանք է»։ Հետաքրքրական է իմանալ, թէ ինչո՞ւ միայն այժմ է խօսում Աղայեան, երբ ինքը չէ պատգամաւոր կամ հոգաբարձու ընտրվող, այլ ուրիշը. ինչո՞ւ նա չը հրաժարվեց այն ժամանակ, երբ մի քանի տարի առաջ նրան Ներսիսեան դըպրոցի հոգաբարձու ընտրեցին. կամ իր ձայնը չը բարձրացրեց և պաշտպանեց Լ. Սարգսեանին, երբ ոչ ժողովրդի ձայներով ընտրված հոգաբարձուները (ըստ Ղ. Ա.-ի՝ մեր մէջ ժողովրդական ընտրութիւն չը կայ) նրան այնպէս ապօրինի կերպով Յովնանեան դպրոցից դուրս հանեցին։ «Նոր գինին հին տիկերի մէջ չեն լցնում»։ Ըստ երևոյթին Աղայեան խորը չէ ըմբռնում այն թանգագին գանձի բովանդակութիւնը, որին «ընտրական սկզբունք» են ասում։

Ոչ։ Ինքն Ամենայն Հայոց Հայրապետը չի ընդունի երբէք այն, ինչ որ նրան հրամցնում է Ղ. Աղայեան. դա մի անուշ շարբաթ է, որ թոյն է պարունակում իր մէջ և թունաւորելու է ամբողջ հայ հոգևորականութեան։

Հայ ժողովուրդն ևս չի հրաժարվի իր այն սրբազան իրաւունքներից, որոնց ուրիշ ազգեր արեան և կեանքի գնով են ձեռք բերում։ Հրաժարվել ընտրելու իրաւունքից՝ նշանակում է կամաւոր մահվան դատապարտել իրան։ Առ-Զէն

Մօսկվա, 11 նոյեմբ.

ՀԱՅ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ ԵՒ ԳԻՒՂԸ

I

«Մշակի» № 247-ում Ալ. Քալանթարի «Ժողովրդի մէջ» տպված առաջնորդողը առիթ է տալիս մի շարք խորհրդածութիւնների, մի հարց, որ ինչքան կարևոր ու անհրաժեշտ խնդիր է գիւղական մասսայի համար, նոյնքան և կարօտ է լուրջ պարզաբանութեան այն շարժառիթների նկատմամբ, որոնք դէպի դուրսն են մղում այդ միջավայրից գիւղական ինտելիգենտ դասակարգին։

Գիւղական ամուլ և խաւար անկիւնը որքան այսօր ներկայացնում է մի աննախանձելի կացութիւն մտաւոր զարգացման և կուլտուրայի զարգացման տեսակէտից, նոյնքան և աննախանձելի է այդ խաւար մթնոլորտի յեղաշրջում առաջ բերելու յոյս և ձեռնարկութիւն ունենալու տեսակէտից։

Գիւղ և ինտելիգենցիա բառերը նոյնքան տարբեր են և խորթ իրարից, որչափ այդ խաւար անկիւնը իր մտաւոր, բարոյական ու նիւթական կողմերով խիստ յետ է մնացել և աննպաստ ինտելիգենցիայի հոգեկան ու բարոյական, նոյն իսկ և ֆիզիքական բարձր պահանջների տեսակէտից։

Եթէ գիւղական ինտելիգենցիան հանդիսանում է գիւղական տարրի մտաւոր զարգացման հիմնաքարը, նրա կենսունակութիւնը, բայց գիւղական մասսան իր խորին տգիտութեամբ ներկայանում է որպէս մի անտանելի, անմատչելի և անուղղելի տարր, այնպէս որ ինտելիգենցիան նահատակների համբերատարութիւնը պիտի ունենար իր գաղափարական գործը առաջ տանելու համար։ Ամեն մի ինտելիգենտ երբ գիւղ է գնում, կամ ճակատագիրը նրան դրել է գիւղում ապրելու և գործելու վիճակի մէջ, նա շատ լաւ պէտք է հասկանայ, թէ ինչ միջավայրում է գտնվում ինքը և իրան շրջապատող տարրը ինչ բնաւորութեան գըծեր ունի։

Նա պէտք է համոզվի, որ ոչ մի նախանձելի բան չը կայ այդտեղ, և գիւղը իր բոլոր էութեամբ կատարեալ տանջանք պէտք է ուսուցնէ իրան։

Գիւղական մասսան մարդկութեան ամենամեծ էգօիստն է, որը նրա մէջ քարացրել է դարերի տգիտութիւնը։ Այդ կողմը ջախջախելու համար տարիներ են հարկաւոր։

Գիւղացին ամենամեծ լակոնն է. և երբ դու նրա վիճակի կամ արդիւնաբերութեան որակի մասին հարցեր տաս, երբեք չես կարող ոչ մի ճիշդ տեղեկութիւն ստանալ. Նա քեզ միայն կը գանգատուի և, ինչպէս մի մուրացկան, օգնութիւն և կարեկցութիւն կը խնդրի քեզանից։

Նրա մէջ մեռած է ինքնասիրութիւնը. և քո առաջ հանդիսանում է մի վերին աստիճանի թոյլ, վախկոտ և սողացող արարած։ Դարերի բռնակալութիւնը ձուլել է նրան և կաղապարել ստրկականութեան բնազդի մէջ, և նա սովորել է իր գոյութիւնը քարշ տալու համար միայն սողալ։

Գիւղացին որոշ գոյն և բնաւորութիւն չունի։ Նա քեզ մօտ մի այլ մարդ է, իր միջավայրում՝ բոլորովին այլ։

Նա քո առաջ կը խոնարհուի, քո բոլոր ասածները առ երես կընդունի որպէս ճշմարտութիւններ, իսկ քո ետևից կը քամահրի և կը ծիծաղի քեզ վրա ռամիկի կոպտութեամբ։ Մուշ. Բագրատունի

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ *)

(Հեռագրով)

Պետերբուրգ, 16 նոյեմբերի

Պարչևսկին պնդում է, որ ոչ մի տեղ անհատական ազատութիւնը այնպէս չէ հալածվում, ինչպէս Ռուսաստանում առհասարակ և Լեհական Թագաւորութեան մէջ՝ մասնաւորապէս, ուր, նրա ասելով, ամեն մի քաղաքացի տառապում է կեանքի անձեռնմխելիութեան սկզբունքը խախտելուց, իսկ առաւել ևս ռուսացման քաղաքականութեան պատճառով, ինչպէս նաև նրա համար, որ լեհ ժողովուրդը նախկին ժամանակներում սովորել է բարեկեաց կեանք ունենալ։ «Մեր երկրի ամբողջ պատմութիւնը,—ասում է հռետորը,—Ռուսաստանին միանալու օրից ճնշումների և կամայականութեան պատկեր է։ Այս օրինագիծը ինքնին մի խղճուկ նշանակէտ է կեանքի անձեռնմխելիութեան օրէնքի։ Ժանդարմերիայի ձևական քննութեանը վերաբերող յօդուածները կարելի է ազատօրէն դէն ձգել»։ Ապա հռետորը քննադատում է 15-րդ յօդուածը, որ, նրա ասելով, ամրապնդում է տեղափոխութեան ազատութիւնը սահմանափակող բոլոր այժմեան կանոնները։ Օրինագծի մի կարևոր պակասութիւնն էլ այն է, որ բոլորովին մշակված չեն այն կանոնները, որոնք վերաբերում են քաղաքացիական իշխանութեանը աջակցելու կանչվող զօրքերին։ Վերջում Պարչևսկին գտնում է, որ եթէ Եւրոպայի բոլոր երկիրներում կեանքի անձեռնմխելիութեան սկզբունքը գործում է կանոնաւոր կերպով, դա այն պատճառով է, որ այնտեղ գործադիր իշխանութիւնը համակված է կեանքի անձեռնմխելիութեան հիմունքներով (ծափեր ձախից)։

Տիտով քահանան պատմական ակնարկ է ձգում անձնաւորութեան անձեռնմխելիութեան գաղափարի զարգացման վրա, սկսած հնագոյն ժամանակներից մինչև մեր օրերը։ Հին Յունաստանը և Հռօմը ընկան, հռետորի կարծիքով, միմիայն մարդու ազատութիւնը ճնշելու պատճառով։ Դումայական հոգևորականութեան առաջադէմ փոքրամասնութիւնը ձայն կը տայ յօգուտ բոլոր այն ուղղումների, որոնք ուղղված կը լինեն ընդլայնելու մարդու ազատութիւնը, որ սրբագործեց ինքը Քրիստոս Գողգոթա լեռան վրա... Իր համախոհները յոյս ունեն, որ աջակողմեաններն ևս, ինչպէս ամեն նրանք, որոնց համար թանգ են քրիստոնէութեան գաղափարները և որոնց համար հասկանալի է պատմութիւնը, կը պաշտպանեն նրա կարծիքը պետական շինարարութեան այդ ամենակարևոր հարցի մասին (ծափեր օպպօզիցիայում)։

Մաքսուդովը ընդարձակ ճառով մահմէդական խմբակի անունից պնդում է, որ օրինագիծը յանձնվի նոր մասնաժողովի։ Պատասխանելով Շուլգինին, հռետորն ասում է, որ քաղաքական տեսակէտից թուրքերը նոյնպէս, ռուսների նման, հաւասար քաղաքացիներ են, ինչպէս և բոլոր ազգութիւնները, իսկ ցեղական տեսակէտից աջակողմեանների և չափաւոր-աջակողմեանների մէջ էլ գտնվում են ոչ միայն սլաւոններ, այլ և նախկին թուրքեր, ինչպէս օրինակ Բալաշովը և իշխան Ուրուսովը թուրքական ծագում ունեն։ Ապա Մակսուդովը, առաջ բերելով կուլտուրական պետութիւնների մէջ գործադրվող կեանքի անձեռնմխելիութեան օրէնսդրութիւնը, պատմում է, որ հնում, միջին դարերում և ներկայիս պատմութեան փորձերը ցոյց են տալիս, որ բոլոր իսկական ռուսները ձգտում են կեանքի անձեռնմխելիութեանը։ (Ծափ. օպպօզից.)։

Բոբեանսկին ճառելով ասում է, որ ներկայ օրինագիծը պէտք է լրացվի նախ՝ լիակատար երաշխաւորութիւններ տալով քաղաքական յանցաւորներին անկախ այն երաշխաւորութիւններից, որոնք շնորհվում են գողերին և աւազակներին, երկրորդ՝ պէտք է լրացվի այնպիսի նորմաներով, որոնք կանոնաւորեն պաշտօնական անձանց պատասխանատուութիւնը քաղաքացիների ազատութիւնը խախտելու համար։ «Այժմեան նախագծով դուք,—վերջացնում է հռետորը,—մօտեցել էք քաղաքացիական ազատութեան սեղանին. Նրա մէջ դուք պէտք է մտնէք մաքուր խղճով» (ծափ. ձախից)։

Ֆրիդմանը մատնանշում է, որ կեանքի անձեռնմխելիութեան իրաւունքի նշանակէտերից մինն էլ ազատ տեղափոխութեան իրաւունքն է հանդիսանում։ 15-րդ յօդուածը, որ ամենից շատ վերաբերում է հրէաներին, այդ տեսակէտից ոչինչ չէ տալիս։ Հրէական հարցը լուծելու համար Դուման պէտք է կանգնէ համեմատական տեսակէտի վրա (ծափ. ձախից)։

Տիմօշկինը ասում է, որ կեանքի անձեռնմխելիութիւնը ձախակողմեան կուսակցութիւնների պատրանքն է, որովհետև նրա իրագործման դէպքում ամեն մի «ձախ» մարդ կարող է ազատօրէն ռումբ կրել, իսկ խաղաղ քաղաքացիները հանգիստ չեն ունենայ։

Հոկտեմբերեան Պոլովցևը նկատում է, որ ձախակողմեանները, ի թիւս որոց և կադետները, շատ առաջ են գնում։ Այժմ պէտք է բաւականանալ առաջին քայլով, որ տալիս է կառավարական նախագիծը։

Ժամը 5 և 48 րոպէին յայտարարվում է ընդմիջում։

Նիստը վերսկսվում է ժամը 8 և 53 րոպէին։ Նախագահում է Շիդլովսկին։

Բլինովը առաջադիմականների ֆրակցիայի կողմից առաջարկում է մի կէտ մտցնել օրինագծի մէջ, որի համաձայն ոչ ոք չէ կարող պատժվել այլ կերպ, բայց եթէ միայն դատարանով։

Դըմշան գտնում է, որ քննվող նախագիծը չէ ոչնչացնում ոստիկանական հսկողութիւնը և առաջվայ նման նեղում է տեղափոխման ազատութիւնը՝ բնաւ չը շօշափելով ռուսական անցաթղթային սիստեմը։ Բնակարանի անձեռնմխելիութեան հարցը նոյնպէս, հռետորի կարծիքով, վատ է մշակված։ Մինչդեռ Ռուսաստանում բնակարանի անձեռնմխելիութիւնը յաճախ է խախտվում։ Նկատի չէ առնվում նմանապէս պօստային թղթակցութեան գաղտնապահութիւնը։ Լեհական Թագաւորութեան գիւղերում նամակները յաճախ ստացվում են բացված։ Ընդունել նախագիծը իր ներկայ դրութեամբ անկարելի է։ «Դուման,—վերջացնում է հռետորը,—պէտք է յիշէ, որ անհատական ազատութեան սկզբունքը ինքն ըստ ինքեան կուլտուրական և բարոյական առաջադիմութեան սկզբունքն է» (ծափ. ձախ.)։

Պուրիշկևիչը մէկ առ մէկ ընդդիմախօսելով Մակսուդովին, Դըմշային, Բոբեանսկուն և Ֆրիդմանին՝ առաջարկում է յանուն պետական բարձր բարիքի ընդունել օրինագիծը մասնաժողովի խմբագրութեամբ և ոչ մի աւելի քայլ չանել։

20 հռետորներից վեցը հրաժարվում են խօսելուց։

Զախարով 2-րդը կարծում է, որ Ռուսաստանում կեանքի անձեռնմխելիութիւնը գոյութիւն ունի միմիայն արտոնեալ դասակարգերի համար, իսկ գիւղացիների և բանւորների համար այդպիսի անձեռնմխելիութիւն գոյութիւն չունի։

Անձնական հարցով խօսում են Մակսուդովը, Բոբեանսկին, Կրոպոտովը։

Ժամը 10 և 45 րոպէին նիստը փակվում է։ (Հ. Գ.)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

◆ Հողագործութեան և հողակարգութեան գլխաւոր վարչութիւնը մտցնում է Պետական Դումա մի օրինագիծ, որը իրաւունք տայ մինիստրին ըստ իր հայեցողութեան թոյլատրել Լեհաստանում և Շուրջբալտեան երկրում գտնվող մինիստրական ուսումնարաններում դասաւանդութիւնը տեղական լեզուներով։

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը մտցնում է Պետական Դումա մի օրինագիծ, որով խնդրում է ժանդարմների մարմնի ուժեղացման համար տարեկան 250.000 ր. և միանուագ՝ 30,000 ր.։ Մինիստրութիւնը գտնում է, որ հակակառավարչական շարժումը երկրի մէջ վերջերս զօրեղացել է այնչափ, որ ժանդարմների ներկայ կազմը չէ բաւականանում հսկելու համար։ Հետաքրքրական է, որ մինիստրութեան մատնանշած «երկիւղալի» տեղերի շարքում չը կայ Կովկասը, որի «անհատական» ձգտումները, «հակակառավարչական» ընթացքը մատի փաթթան են դարձել աջակողմեանների համար, մի մեղադրանք, որով նրանք միշտ հանդէս են գալիս կովկասեան հարցեր քննելու ժամանակ։

◆ Դումայական «առաջադիմականների» վերջին ժողովում ընդունվել է այն առաջարկութիւնը, որ հոկտեմբերեանների մշակած անձի անձեռնմխելիութեան օրինագիծը կրկին յանձնվի նոր մասնաժողովի քննութեանը։ Նոր մասնաժողովին նրանք առաջարկում են ղեկավարվել այս սկզբունքով։ Ռուսաց կայսրութեան մէջ չը պիտի լինի որևէ իշխանութիւն, որը առանց դատարանի վճռի իրաւունք ունենայ քաղաքացուն ենթարկել աքսորի, բնակչութեան տեղից հեռացման, կամ բանտարկութեան։

ՕՐՎԱՅ ԶԱՐԻՔՆԵՐԻՑ

Գօրիս, 10 նոյեմբերի

Թէ որքան աննախանձելի է հայ ուսուցչի դրութիւնը, այդ բոլորիս յայտնի է։ Նա կեանքի թշուառ զաւակներից է։ Սակայն ծով է ստեղծել այդ կասեմ, որ դպրոցների անպահով, երերուն, նիւթականից զուրկ, անկայուն դրութիւնը և այս կամ այն ընկերութեան, անհատի կամայականութեամբ իր ողորմելի գոյութիւնը քարշող նրանց բաղդը։ Դեռ բաւական չէ, որ ուսուցիչը, մանաւանդ գաւառում, ստիպված է կռուել տգէտ քահանաների, դպրոցի թըշնամիների, տէր-թօզիկեան վարժապետների դէմ, որոնք չեն գնահատում ուսումը, կրթութիւնը, որոնք չեն գիտակցում կանոնաւոր ուսման անհրաժեշտութիւնը, այլ և սունկի պէս անհատներ են բուսնում, որոնք, չը գիտեմ ո՞ր առանձնայատուկ ընդունակութեամբ, դպրոցական ասպարէզում նոյն իսկ լիազօր տէրի դեր են կատարում և մի շարք պախարակելի արարքներով հանդէս են գալիս պարծեալ ի փառս հայ ուսուցչի։

Մասնաւորենք մեր ասելիքը և կանգ առնենք Բ. Հ. Կուլտ. Միութեան Զանգեզուրի տեսուչ Ց. Գէորգբէկեանի վրա։ Նա հին ուսուցիչներից է և անշուշտ տարել է այն բոլոր զրկանքները, որոնք անխուսափելի են հայ ուսուցչին։ Սակայն ինչ է կատարվում նրա օրով։

Անցեալ ուս. տարվայ ուսուցիչները իրանց թթուն խմած գնացին, միս ու վախը բերաններից անպակաս, և, իրանց հերթին լրագրերի էջերը զարդարել էին ու նկարագրել Գէորգբէկեանի վերաբերմունքը դէպի նրանց։

Ներկայ ուսումն. տարում էլ անցեալի պէս հոկտեմբերի կէսերին ուսուցիչներ է բերել և հազար ու մի գեղեցիկ խոստումներով այս կամ այն գիւղում տեղաւորել, իսկ ինքը արձակ գնդակի պէս Ղափանի գիւղերում մնացել։ Այժմ մեր առաջ կանգնած է Բարաշէն գիւղի ուսուցիչը իր ողորմելի և խղճալի դրութեամբ։ Երբ նա պատմում է այն բոլոր խոստումները, ինչ որ տեսուչը արել է, մարդ միանգամայն շւարում է։ Նա հրաւիրված է մօտ 30-աչափ մանուկների համար, որոնցից շատ քչերը կան յաճախող. բնակարանը խոնաւ, պատուհանները առանց ապակիների, յատակը խոնաւ հող, ուսուցիչը բառիս բուն իմաստով առանց կօպէկի, քաղցած։ Եւ այս բոլոր անյարմարութիւնները տեսնելով և չը տանելով, նա Գօրիս է եկել բողոքելու տեսչին։ Նրա տեղը յայտնի չէ։ Տեսէք թէ ինչ. դպրոցը անպատրաստ, մանուկները փողոցներում մինչ օրս, ուսուցիչը գրեթէ քաղցած ընկած քաղաքումս ամբողջ 20 օր և տեսուչը՝ անյայտ։ Եւ սա գործ է, և սա բարեխղճութիւն է։ Ասենք թէ ուսուցիչը տեսչին է սաղ. եկել, խուփը՝ կճուճը գտել, սակայն ժողովուրդը ինչո՞վ է մեղաւոր, որ այժմվայ անյարմարութիւնները ժամանակին չեն հարթվել։

Ուսուցիչը 20 օր գիւղում և 20 օր էլ քաղաքում շրջելով, տեսչին փնտռելով, ոչ մի հետևանքի չի հասցնի այս անփութութիւնը։ Ի՞նչ բարեխղճութիւն է այդ։ Մարդու հետ, առաւել ևս հայ չարաբաղդ ուսուցչի հետ, մարդավայել վարվելու է և նրան քաղցած չը պէտք է թողնէք, նրան հրաւիրող պ. տեսուչ։ Չէ՞ որ աչքաթող արված ուսուցչի ընկերները իրանց բուռն գայրոյթով բաղխել կարող են Կուլտ. Միութեան դռները և իրանց ընկերոջ պատիւը և դրութիւնը վերականգնել։

Անցեալ ուս. տարվայ դժբաղդ զոհերին աւելանում են և այժմ Բարաշէնի նախ երեխաները, որ 2 ամիս է ուսուցիչ ունեն, բայց գիրք չեն բացել, երկրորդ՝ ուսուցիչը, որ վարձված է ձեռնից և այժմ քաղցած ընկած Գօրիսում։

Որտեղ որ էք, աչքներդ Գօրիս, Բարաշէն դարձրէք, տեսէք այն ամենը, ինչ որ կատարվում է, և եթէ արդարանալու պատասխան ունէք, խնդրեմ։

Սաղանդարեան

ՅՕԳՈՒՏ ԱԴԱՆԱՅԻՆԵՐԻ

Յօգուտ ադանացիների սկզբից մինչև այսօր մեր խմբագրութեան մէջ ստացվել է ընդամենը 1988 րուբլի 54 կ. (տես «Մշակ» 1909 թ. №№ 134, 138, 142, 152, 154, 168, 172, 193, 209, 220, 225, 230, 233, 234, 236, 237, 238, 239, 240 և 252)։ Այդ գումարից զանազան ժամանակ յանձնել ենք Հանգանակիչ Մասնաժողովին 846 ր. 63 կ., երէկ, նոյեմբերի 18-ին, դարձեալ յանձնեցինք 1000 (մի հազար) րուբլի, որով մեզ մօտ մնաց 141 ր. 91 կ.։ Յոյս ունենք, որ հայ հասարակութեան լումաներով այս գումարը հետզհետէ կը հասնէ հազարների և մենք յաճախ կը տանք Հանգանակիչ Մասնաժողովին հազարական րուբլիներ։

Ծանօթ.—«Մշակի» № 252-ում տպված Ռոստովից ստացված 10 ր. ստացվել է՝ 5 րուբլին Գ. Զալխուշեանի զաւակներից, իսկ 5 ր. Լալազարեան եղբայրների զաւակներից։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Պետերբուրգ մեկնեց ընտանիքով Կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի նախկին օգնական սենատոր Միցկեվիչը։

◆ Նոյեմբերի 17-ին II քաղաքամասի ոստիկանութիւնը զինուոր-պահակների հետ շուրջկալ կատարեց և ձերբակալեց 25 անգործ և անանցաթուղթ մարդկանց։

◆ Մենք ստացանք Արխանգելսկի նահանգի Կէմ քաղաքից հետևեալ հեռագիրը, հոկտեմբերի 17-ից. «Արխանգելսկ նահանգի Կէմս քաղաքի աքսորական հայերը արտայայտում են խորին ցաւակցութիւն տիկին Դարիա Մանթաշեանի մահվան առիթով։ Աքսորականների կողմից՝ Հայկ Պօմանցկ»։

◆ Երէկ, նոյեմբերի 18-ին, Ա. Քալանթար ժամը 4—6-ը կարդաց իր երկրորդ դասախօսութիւնը կաթնատնտեսութեան մասին։ Այս անգամ քննութեան առնվեցին իւղագործութեան և պանրագործութեան վերաբերեալ խնդիրները։ Այսօր, նոյեմբ. 19-ին, տեղի կունենայ երրորդ դասախօսութիւնը, որը նուիրված կը լինի տաւարապահութեան վերաբերեալ խնդիրներին։ Դասախօսութիւնը կը կարդացվի Գիւղատնտեսական Ընկերութեան ստորին յարկում։ Մուտքը ձրի է։ Յաճախորդները կարող են մուտք գործել Ալեքսանդրեան այգուց։

◆ Նոյեմբերի 17-ին Թիֆլիսի քաղաքային վարչութեանը ներկայացան քաղաքի մսագործները և յայտնեցին, որ վերջին օրերս անասունների գները զգալի չափով բարձրացել են և նրանց համար վնասակար է ծախել միսը հաստատված սակագնով, որով խնդրում են աւելացնել գները։ Քաղաքային վարչութիւնը նոյեմբերի 20-ի համար նշանակել է դումայական տնտեսական մասնաժողովի նիստը՝ այդ միջնորդութիւնը քննելու համար։

◆ Մեծ քանակութեամբ եկած ձիւնի պատճառով Բաթում-Ախալցխայի խճուղու վրա երթևեկութիւնը դադարել է։

◆ Արամեանի անուան հիւանդանոցը չի բացվի դեկտեմբերի 1-ին, ինչպէս ենթադրվում էր, որովհետև ներքին կահաւորութիւնը պատրաստ չէ։

◆ Այսօր «Մուլէն-Էլեքտրիկ» թատրոնում նոր ծրագիր է։ Ի միջի այլոց ցոյց կը տրվի «Բիանկա Կապպել» պատմական ողբերգութիւնը։ Հետաքրքրական նորութիւն ներկայացնում է նաև մի շաբաթ օդագնացութիւն Ժիւվիզում և այլն։

◆ «Մշակի» 253-րդ համարում տպված «Տիկին Հրաչեան ինքնակենսագիր-յիշատակագրող» յօդուածի մէջ մի սխալ է սպրդել. յօդուածի սկզբում տպված է (2-րդ երեսի 4-դ սիւնակի սկզբին). «Բեմի այդ սիրաղէմ դիցուհին... մնչում է՝ թէ մուսան քնարը ուրիշներին է նուիրել և իրան թողել է լոկ արձանագրողի պաշտօնը...». պէտք է լինի՝ «...արձագանգողի պաշտօնը...»։

◆ Երևանի նահանգի Նոր-Բայազէտի գաւառի Ալուղալու գիւղի հայ հասարակութիւնը մեզ ուղղած մի նամակով սաստիկ գանգատ է յայտնում իր քահանայ տէր-Գէորգ Տէր-Գէորգեանի դէմ և խնդրում է մեզ հրաւիրել հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը նրա արարքների վրա։

◆ Մի նամակ ևս ստացել ենք Երևանից, որ նկարագրում է, թէ այդ քաղաքի ս. Պետրոս և Պօղոս եկեղեցում, նոյեմբերի 2-ին, երեկոյեան կատարվել է մի հարսանիք, որի ժամանակ քահանան հարբած է եղել, իսկ հարսանիքաւորներն ևս եկեղեցում ծխում էին ծխախոտ և խմում էին գինի։ Հրաւիրում ենք Երևանի հոգևոր վարչութեան ուշադրութիւնը, իսկ նամակները չենք տպում։ Մենք տեղ և միջոց չունենք մեր լրագրի սուղ էջերը լցնել քահանաների կատարած սխրագործութիւններով։ Դրա համար կայ «Հովիւ», «Արարատ». վերջապէս պէտք է դիմել հոգևոր իշխանութեան։

◆ Բագուի ոստիկանապետ Շերվուտը, որ 2 ամսով արձակուրդի մէջ է, «Каспiй» լրագրի ասելով այլ ևս չի վերադառնայ իր պաշտօնին։ Ոստիկանապետի պարտականութիւնները կատարում է նրա օգնական Ա. Կաղիեչվիլին։

◆ Կարսից մեզ գրում են. «Կ. Հ. Բ. Ընկերութեան Կարսի ճիւղի վարչութիւնը հարկ է համարում յայտնել իր շնորհակալութիւնը Գ. և Մ. Համալեաններին, որոնք ի յիշատակ իրանց հանգուցեալ հօր, Կիւրեղի, նուիրեցին ընկերութեանը 100 ր.»։

◆ «Մշակի» երէկվայ համարի (№ 256) Ներքին լուրերի բաժնում հաղորդված էր, թէ մի խումբ բանւորներ թոյլտուութիւն են խնդրել նահանգապետից՝ երեկոյեան և կիրակնօրեայ դասընթացքներ բանալու։ Խնդրամատոյց եղողները նուխեցիներ են և այդ դասընթացքները բացվելու են Նուխի քաղաքում։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

◆ Արմաշի դպրեվանքի խնամակալութիւնը որոշել է կիլիկեցի 20 որբեր ընդունել յիշեալ դպրեվանքում։ Ադաբազարի հայերն այդ որբերից 10-ի համար խոստացել են տարեկան 8-ական օսմանեան ոսկի վճարել։

◆ Մենք վերջերս, Կ. Պօլսի հայ թերթերից քաղելով, հաղորդել էինք, որ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամներից մինը՝ հ. Սուքիաս Եփրիկեան՝ այդ միաբանութեանը պատկանող 2—300,000 ֆրանկը գրպանելով մի ֆրանսուհու հետ նախ անցել է Պարիզ և ապա, ֆրանսուհուն թողնելով այնտեղ, գնացել է Տրապիզոն, որտեղից, ֆրանսուհու՝ նրան գտնելու համար ձեռք առած միջոցներից խուսափելու համար, անյայտացել է։

Այժմ Եգիպտոսում հրատարակվող «Լուսաբեր-Արև» թերթում այդ խնդրի մասին լոյս տեսած մի նամակից երևում է, որ Եփրիկեանը ներկայումս գտնվում է Իտալիայում և իր բարեկամներից մէկին ուղղած մի նամակում հետևեալ տողերն է գրել խնդրելով հրատարակութեան յանձնել այն՝ հայ թերթերում։

«Պօլսական թերթերէն և ոչ մին տեսած չեմ ամիսներէ ի վեր, ու միայն կենսապայքարի ծանր հոգերով բեռնաւորուած՝ բնաւ տեղեկութիւն չունէի անոնց շուրջը եղած տարաձայնութիւններուն մասին, որոնց համար խորապէս կը ցաւիմ։ Պօլսոյ թերթերը իմ անունս շփոթած են Գէորգ Պայեան անուն ուրիշ կրօնաւորի մը հետ, որուն համար ես ալ գիտեմ թէ գայթակղալի ընթացքի մը մէջ գտնուած է ֆրանսուհիի մը հետ։ Իսկ դրամական 2—300,000 ֆրանկի խնդիրը կատարեալ զրպարտութիւն մըն է։ Եթէ այդպիսի քաջագործութիւն (?) մը ընելու կարող ըլլայի, միաբանութիւնը պէտք էր և իրաւունք ալ ունէր որ դէպի բանտ հրաւիրած ըլլար զիս հիմա։ Ոչ թէ 300,000 ֆրանկի, այլև 300,000 սանտիմի բաց մը թողած չեմ ետիս։ Ճակատս բաց է ասոր համար և խիղճս հանդարտ առաջի Աստուծոյ և մարդկանց»։

Եփրիկեանը, որ, ինչպէս երևում է, ներկայումս հրաժարվել է հոգևոր կոչումից և ապրում է Յակոբ Եփրիկեան անունով, իր յիշեալ բարեկամին խնդրում է դիմել Կ. Պօլսի «Ժամանակ» թերթին, որի Ադրիանուպօլսի թղթակիցն էր առաջին անգամ հրապարակ հանել Եփրիկեանի մասին շրջած այս լուրերը, պահանջելով որ հերքէ իր թղթակցի հաղորդած նախկին անուանարկիչ լուրը։ Եթէ «Ժամանակի» խմբագրութիւնը հրաժարվի այդ պահանջին բաւարարութիւն տալուց, այդ դէպքում Եփրիկեան սպառնում է դատ բանալ այդ թերթի դէմ։

◆ Կ. Պօլսի «Հայրենիք» թերթում տպված է Վանի նախկին առաջնորդ Զաւէն վարդապետի նամակը, ուր յիշեալ վարդապետը աշխատում է մի տեսակ յետս կոչել իր նախկին նամակը, որով այնքան ծանր մեղադրանքներ էին բարդվում դաշնակցականների վրա՝ Աղթամարի վանքերի կողոպտման մասին։ Նա ասում է, որ այդ նամակը նախ՝ ունեցել է մասնաւոր բնաւորութիւն և ուղղված է եղել իր մի բարեկամին, որին, յամենայն դէպս, իրաւունք չէ տրված եղել հրատարակութեան յանձնելու այդ գրութիւնը. երկրորդ՝ որ Դաշնակցութեան պաշտօնական մարմիններն անգիտակ են մի քանի անձնաւորութիւնների կողմից գործված չարագործութիւններին։ Նամակը գրված է այնպիսի ոճով ու ձևով, որ Կ. Պօլսի հայ մամուլը գալիս է ոչ մխիթարական եզրակացութեան։ Ի վերջոյ վարդապետը պահանջում է, որ քննութիւն նշանակվի և ճշմարտութիւնը երևան գայ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Սիմֆերոպոլ, 8 նոյեմբերի

Դերասան Օհանեանը տ. Զամուկեանի և Ծովակի հետ Օդեսսայից գալով Սիմֆերոպոլ և ցանկանալով հայերէն լեզուով ներկայացում տալ, բայց դժբաղդաբար փոխ-նահանգապետից չը ստանալով հայերէն ներկայացման իրաւունք (առ հասարակ տեղիս փոխ-նահանգապետը օտար լեզուներով ներկայացման իրաւունք չէ տալիս) ամսիս 1-ին ծխական դպրոցի դահլիճում ռուսերէն ներկայացում տուեց։ Խաղացին «Անազնիւ չեն ծնվում» դրաման և «Գող» կօմեդիան։

Թէ դրաման և թէ կօմեդիան անցաւ աւելի քան աջող։ Վերջը Օհանեանը դաշնամուրի ներդաշնակութեամբ կատարեց Ալեքսանդրովի «Խելագարը», որը հասարակութեան երկարատև ծափահարութիւնից յետոյ կրկնեց երկրորդ անգամ։ Հասարակութիւնը այդ երեկոյ ներկայացումից հեռացաւ իր գեղարուեստական ճաշակին բաւականութիւն ստացած՝ շնորհիւ դերասան Օհանեանի։

Ի դէպ է յիշել հայ դերասանական խմբերին զգուշացնելու համար, որ քաղաքիս հայ հասարակութեան «պատգամաւորական ժողովը» որոշել է, որ դերասանական խմբերին արգելվում է ձեռքի վրա տոմսակ ծախել, բացի բարեգործական նպատակներով տրված ներկայացումներից. բայց քանի որ հայ հասարակութիւնը ինքնաբերաբար երբեք չի յաճախի հայկական ներկայացումներին և հայ դերասաններին միշտ նիւթական սուղ դրութեան մէջ կը ձգէ, ուստի դերասանական խմբերը թող ի նկատի ունենան վերոյիշեալ որոշումը և Հիւսիսային Կովկասում ներկայացումներ կազմակերպելու ծրագիրները կազմելու ժամանակ խաչ դնեն քաղաքիս վրա։

Սիմֆերոպոլցի

---

*) Տես «Մշակ» № 256.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 15 նոյեմբերի

Միշտ և հանապազ «անաչառութեան» անունից ճառել սիրող «Հովիւ» շաբաթաթերթի № 43-ի լուրերի բաժնում կարդում ենք. «Սկսվում է յոբելեանների սեզոնը: Մի խումբ մարդիկ որոշել են ամսիս 21-ին կատարել Ալէքսանդր Քալանթարի 30-ամեայ ծառայութեան յոբելեանը, որպէս գիւղատնտեսի, և նրա գովքը անում է Հ. Առաքելեանը «Մշակի» № 252-ի 1909 թ. յաւելուածի մէջ»: Նախ՝ ի մեծ դժբաղդութիւն հասարակութեան յարգանքը վայելող յոբելեարի մասին մութ ակնարկ անող տէրտէր խմբագրին պէտք է նկատել, որ յոբելեան կատարել որոշողները եղել են ոչ թէ «մի խումբ մարդիկ», այլ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան նման մի պատկառելի հիմնարկութիւն և հասարակութեան այն մասը, որի համար բացի տէրտէրականութիւնից՝ գոյութիւն ունի նաև գիւղացիութիւն և գիւղատնտեսութիւն: Երկրորդ՝ համեստաբար պէտք է հարցնել կրքից կուրացած «Հովիւ» թերթի խմբագրին, որը երբ թէ սկզբունքով դէմ գնալ է ջանում յոբելեաններ կատարելուն, թէ այդ ինչո՞ւ մի տէր-Եզնիկի զուտ մաշտոցա-ծիսակատար և տիրացուական գործունէութեան յոբելեան կատարելը լուրջ գործ է համարվում և «Հովիւ» թերթումն էլ մի շարք գովասանական յօդուածների արժանանում, իսկ Քալանթարի այնքան արդիւնաւոր գործունէութեան յոբելեանը ատելութեան չար կրքից կուրացած խմբագիր տէրտէրի կողմից ցինիկական մութ ակնարկների արժանանում «Հովիւ» «բարոյական» թերթում... Ճաշակի խնդիր է. բայց այրված սիրտը հովացնելու մտքով նման ժանգոտված զէնք վերցնողը այդպիսով աւելի կը բարձրացնէ հակառակորդի յարգված պատիւը և մեր՝ հեռուից դիտողներիս էլ խորին զզուանքին կարժանանայ իր՝ ճշմարտութեան առաջ գիտակցաբար կոյր ձևանալու համար: Գիւղացի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՊԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Պիոս X պապը վճռեց նորից հանդէս գալ մի ճառով այն կռւի առիթով, որ տեղի ունի ներկայումս Ֆրանսիայում հոգևորականութեան և կառավարութեան միջև: Նախընթաց ճառերի նման, պապի ներկայ ճառն էս աչքի է ընկնում իր խիստ լեզուով «հալածողների» հասցէին և հրաւիրում է ներկայ հոգևորականութեանը չը թուլանալ կռւի մէջ:

«Հալածանք» խօսքը,—ասում է նա,—չէ կարող ոչ ոքի չափազանց երևալ, որովհետև այլապէս ինչպէս բնորոշել այն մարդկանց գործերը, որոնք կամայականօրէն պատեցին եկեղեցու հետ կապած հանդիսաւոր դաշնագիրը, որոնք յափշտակեցին նրա սրբազան ստացուածքը, որոնք ճնշում են առաքինութեան և մաքրութեան ամեն զգացմունք և աքսորում են հայրենիքից կրօնական կարգերին պատկանող արժանաւորագոյն քաղաքացիներին, որոնք բամբասօրէն հանրապետական թշնամի են հրատարակում հոգևորականներին նրա համար միայն, որ նրանք պահանջում են կրօնի և եկեղեցու համար այն ազատութիւնը և յարգանքը, որոնց վրա նրանք անվիճելի իրաւունք ունեն»:

Ապա պապը անցնում է օրվայ չարիք կազմող հարցերին, այն է՝ աշխարհական դպրոցի դէմ կռիւ մղելու և կաթօլիկների միութեան մասին:

«Եպիսկոպոսները, որոնք վկայ են այն ահագին չարիքի, որ պատճառում է աշխարհական դպրոցը, հարկադրելով մատաղ սերնդին պիղծ և անբարոյական գրքեր կարդալ, վշտի աղաղակներ բարձրացրին՝ ընտանիքների հայրերի ուշադրութիւնը գրաւելու համար նրանց մանուկներին սպառնացող վտանգի վրա: Եւ ահա այն ժամանակ, երբ իւրաքանչիւր Ֆրանսիացի քաղաքացի իրաւունք ունի ստիպելու, որ լսեն իր խօսքերը, եպիսկոպոսների յայտարարած ճշմարտութիւնը ատելութեան առարկայ դարձաւ իշխող անձերի համար, և ահա այժմ նրանք կամենում են խլել այդ եպիսկոպոսներից նրանց իրաւունքը՝ ուսուցանել իրանց հօտին»: Պիոս X-ը հրաւիրում է կաթօլիկներին սերտ կերպով միանալ իրանց հոգևոր առաջնորդ եպիսկոպոսների շուրջը, յորդորելով կռիւ մղել եկեղեցու ազատութեան համար, և յոյս է յայտնում, որ «կը գայ մի օր, որ կը տայ նրանց յաղթութիւն թշնամիների վրա և կը վարձատրէ այժմ թափվող արցունքները»:

Պապի ճառին Ֆրանսիայում բնականաբար խիստ պատասխաններ տուին: Զգոյշ և չափաւոր «Temps» լրագիրը գրում է, որ «պապական ճառերի մէջ այն կարծիքն են հաստատում, թէ Հռոմը չէ ցանկանում հանգիստ թողնել Ֆրանսիային, մինչև որ կառավարութիւնը հանդիսաւոր մեղայական չը բերի նրան: Աւելորդ անգամ ստիպված ենք մատնացոյց անել այն կործանաբեր ազդեցութիւնների վրա, որոնք Պիոս X-ի քահանայապետութեան օրից մղում են Հռոմը դէպի ծայրայեղ քայլերը այն երևակայական յուսով, որ եկեղեցին վերջ ի վերջոյ օգուտ կունենայ մի այդպիսի գործելակերպից»:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

17 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պօստ-հեռագրական գլխաւոր վարչութեանը կից մտադրութիւն է կազմել յատուկ մասնաժողով շահագրգռված վարչութիւնների մասնակցութեամբ՝ բոլոր շրջանային վարչութիւններին կից և երկաթուղային կայարաններում պօստային գործողութիւններ բանալու հարցի համար:

Սենատը բացատրեց, որ նահանգական ազնւականների ընկերութիւնները չեն կարող մասնակցել քաղաքային ընտրողական ժողովներում:

Քաղաքային դումայի նորընտիր ձայնաւորների թւումն են, ի միջի այլոց, առևտրի մինիստրութեան նախկին կառավարիչ Ֆէօդորով, ժուրնալիստ Պիլէնկօ, գաւառական պարագլուխ Շուբին-Պօզդէև, երդուեալ-հաւատարմատար Լիատիգ, սենատի երկրորդ դեպարտամենտի օբեր պրօկուրոր Տիւտրիւմօվ, պրօֆէսօր Կուզմին-Կարավաև:

Բարձրագոյն թոյլտւութեամբ Ռուսաստանը միացվում է աւտոմօբիլների գործի միջազգային կօնֆերէնցիային:

Պետական խորհրդի անդամ ստատս-սեկրետար Երմօլովը մեկնում է Հռոմ՝ մասնակցելու նոյեմբերի 30-ին բացվող միջազգային գիւղատնտեսական ինստիտուտի անդամների ընդհանուր ժողովի նիստերին:

Ներքին գործերի մինիստրութիւնը աշակերտներին ընդունելու կանոնները խախտելու համար փակեց Օդեսայի «Բարանի և Էֆրուսի» մասնաւոր դպրոցը:

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ: Որովհետև Սինօպում կարանտին է հաստատված, Ռուսաց Ընկերութիւնը այլ ևս ճանապարհորդներ և ապրանքներ չէ ուղարկում Կ. Պօլիս:

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ: Ամուր արուարձանում գտնվեցին երկու ռումբեր:

ՄՕՍԿՎԱ: Բացվեց որսորդների համառուսական համագումարը Մեծ Իշխան Սերգէյ Միխայլօվիչի նախագահութեամբ:

ՊԱՐԻԶ: «Ֆաուստի» ներկայացման ժամանակ, որին ներկայ էր պօրտուգալական թագաւորը, էլէքտրո-տեխնիկների բանւորների սինդիկատը, սպառնալով անմիջապէս լոյսը ընդհատել, իշխանութեանը պահանջ դրեց աւելացնել օրավարձը: Ներկայացումը չը դադարեցնելու համար վճարը աւելացվեց:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների: Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը:
Կսէնիեվսկայա փ., № 6, «Վէտցէլ» հիւրանոցի մօտ: (ե. հ. շ.) 955. 100—26

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ:
Ընդունելութիւն ամեն օր { 12—1 ժ. առաւ. 5—6 ժ. երեկ.
Միքայէլեան փող., № 36, տ. Ծաւճանիձէի: (օ. մ.) 1216. 100—37

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱՐԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ:
Ընդունելութիւնը ամեն օր { առաւօտեան 9—12 ժ. երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—27

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ:
Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. $12^1/_2$—2. (երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—$12^1/_2$.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(ա. օ.) 1044. 100—36

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԷԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Յ. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վէրքի փաթաթումն, դեղերի քսումն (втиранie) ևայլն: Էլեկտրականութիւն ըէվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ: Մասսաժ էլեքտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ: Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն: Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների: Տալիս է այլ և այլ բժշկական-առողջապահական խորհուրդներ: Կարելի է և գրաւոր, ներփակելով վարձատրութիւն ըստ կարողութեան: Ընդունելութիւնը 3—4 ժամը: Семеновская ул., № 9, Վօրօնցօվի կամուրջին մօտ:
(օ. մ.) 857. 0—30

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՂԲԻՒՐ դպրոցական աշակերտների և աշակերտուհիների համար ճանապարհածախսով տարեկան ՄԷԿ Ր.: Նոյն ԱՂԲԻՒՐԸ դպրոցների, գրադարանների, հասարակութիւնների համար տարեկան 3 ր.:
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „АГБЮРЪ".
(Հ. Հ.) 1241. 5—1

Հրաւէր
Շաւարշեան ս. Աստուածածին եկեղեցու չափահաս ծխականները՝ կիրակի, նոյեմբ. 22-ին, առաւօտեան ժամը 11-ին, երրորդ և վերջին անգամ հրաւիրվում են ժողովի ընտրելու երեցփոխ և 2—4 հոգաբարձուներ, նոյնպէս և քննելու յիշեալ եկեղեցու ծխական դպրոցի վերաբերեալ մի ամենակարևոր հարց: Այս անգամ քանի հոգի էլ լինեն, ժողովը կը համարվի կանոնաւոր և կը կայանայ ընտրութիւնը.
Գործակալ՝ Ղևոնդ քահ. Սամվելեանց
1245. 2—1

Լոյս տեսաւ և վաճառվում է
ՍՈՒՔ. ԷՄՄԱՍԵԱՆԻ
ԷՄՄԱՆՈՒԷԼ
Ողբերգ. 5 արարուածով
ԳԻՆՆ Է 80 ԿՈՊ.
Գումարով գնողներին 20% զեղչ, ճանապարհածախսը մեր հաշւին: Հատով ցանկացողները կարող են ուղարկել պօստի մարկաներ: Դիմել Тифлисъ, почт. ящ. №140, Геворку Бабурянцъ.
(օ. մ.) 1229. 5—3

Լոյս տեսաւ
Մ. ՉԱՇԿԵԱՆԻ
1910 Թ. „ՓՈՔՐ" ՕՐԱՑՈՅՑԸ
յայտնի հետաքրքրական գուշակութիւններով: Հասցէն Թիֆլիս, Մակար Չաշկեան.
(Հ.) 1086. 12—10

ԿՕՇԿԵՂԷՆԻ ԽԱՆՈՒԹ
Կ. ՕՀԱՆԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ
Վօրօնցօվի արձանի դիմաց, կամուրջի մօտ:
Կ. ՕՀԱՆԵԱՆՑ և ՈՐԴԻՔ ֆիրման ստացել է ՄՕԴԱՅԻՆ ԵՒ ՇՔԵՂ ՁԵՒԵՐԻ ԿՕՇԿԵՂԷՆ՝ ԱՄԵՆԱԼԱՒ ԵՒ ԱՄՈՒՐ ՏԵՍԱԿԻ, ռուսական և արտասահմանեան ամենաառաջնակարգ ֆաբրիկաներից: Յարգելի հասարակութեան շրջանում ապրանքը մեծ քանակութեամբ տարածելու և բաւականութիւն պատճառելու նպատակով՝ ԳՆԵՐԸ ՇԱՏ ԷԺԱՆ ԵՆ ԵՒ ՄԱՏՉԵԼԻ, որի համար խնդրում ենք անձամբ ստուգել:
P. S. Առաջարկվում է առանձնապէս ամուր կօշկեղէն՝ ուսանող երիտասարդութեան համար:
(հ. շ.) 1246. 2—1

1910 ԹՒԻ ՀԱՄԱՐ
ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ԳԻՒՂԱՏՆՏԵՍ"
պատկերազարդ շաբաթաթերթի (Բ տարի)
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻ» բովանդակութիւնը. Երկրագործութիւն: Անասնաբուծութիւն և կաթնատնտեսութիւն: Պարտիզպանութիւն և պտղաբուծութիւն: Այգեգործութիւն և գինեգործութիւն: Յատուկ բոյսերի մշակութիւն: Մեղուաբուծութիւն և շերամապահութիւն: Բանջարաբուծութիւն: Թռչնապահութիւն: Կօօպերացիա և սպառողական ընկերութիւններ: Գիւղատնտեսական նորութիւններ: Գիւղատնտեսական կեանք: Գրախօսութիւն: Թղթակցութիւններ: Տնայնագործութիւն և տնարարութիւն: Հարց և պատասխաններ: Պօստ-արկղ և յայտարարութիւններ:
Առաջիկայ 1910 թւին «Գիւղատնտեսին» աշխատակցելու են նաև Թիւրքահայ գիւղատնտեսներ:
«Գիւղատնտեսը» 1910 թւի իր տարեկան բաժանորդներին թերթի համարներից դուրս տալու է որպէս նուէր՝
ՀԱՑԱՌՈՅՍԵՐԻ ԵՒ ԽՈՏԱՌՈՅՍԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՍԵՐՄԵՐ
Բաժնեգինը.

Ռուսաստանում		Արտասահմանում	
Տարին . . .	3 րուբլի	Տարին .	4 րուբլի (12 ֆրանկ)
Կէս տարին . .	2 րուբլի	Կէս տարին	2 ր. 50 կ. (7 ֆրանկ)

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Гюхатнтесъ". Արտասահմանից՝ Tiflis (Russie) Rédaction «Guchatntess».
(կ. հ.) 1179. 24—6

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ"
ԻԴ = 1910 ՏԱՐԻՈՅ
«Հանդէս Ամսօրեան» լոյս կը տեսնէ ամեն ամսագլխին կառավարութեամբ Վիէննայի Մխիթարեան հարց և գործակցութեամբ ազգային կարող բանասէրներու:
«Հանդէս Ամսօրեան» նուիրուած է ամբողջապէս ազգային հին և նոր գրականութեան. կուտայ իր էջերու մէջ ամենազգի կարճ և ընդարձակ ուսումնասիրութիւններ և տեսութիւններ հայ աշխարհին, գրականութեան, լեզուին, հնախօսութեան և պատմութեան վրայ:
«Հանդէս Ամսօրեայի» բաժնեգինն է կանխիկ վճարմամբ տարեկան 15 ֆր. = 6 ր.: Իւրաքանչիւր համար կարժէ 1,50 ֆր. = 70 կոպ.:
«Հանդէս Ամսօրեայի» բաժանորդ կարելի է գրուիլ՝ Վիէննա, Խմբագրատունը. դիմել հասցէով՝ Rédaction de la Revue «Handes Amsorya», Vienne, VII/2 Mechitharistengasse 4. Թիֆլիս, դիմել Mr. A. I. Mantacheff (pour Mr. Arakel Sauroukhan), Tiflis կամ «Գուտտենբերգի» գրավաճառանոցը:
1227. 3—2

ԿԱՇՈՒԵՂԷՆԻ ՊԱՀԵՍՏ
Եղբ. ԵԱՐՂՈՒԼԵԱՆՑՆԵՐԻ
Թիֆլիս, Միջին փողոց, № 65.
Յայտնում ենք ի գիտութիւն յարգելի վաճառականների և հասարակութեան, որ մեր պահեստում ստացված են մեծ քանակութեամբ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ (галоши) և ԿՐՆԿԻ ՌԷՏԻՆՆԵՐ, զանազան տեսակ ՇԷՎՐՕՆԵՐ, ԲՕՔՍԵՐ (խրօմ) ու ամեն տեսակ ԿԱՇՈՒԵՂԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ—Ռուսաստանի և արտասահմանի արդիւնաբերութիւն, նոյնպէս և կօշկակարների գործիքներ ու կօշկադեղեր յայտնի ֆիրմաների: Ինչպէս կրկնակօշիկները, նոյնպէս և բոլոր ապրանքները ծախում ենք—մեծաքանակ (оптомъ) գնողներին գործարանային գներով, իսկ հատավաճառը (розничн. продажа) ամենաէժանոտ գներով: Ունենք բաժանմունք ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, որտեղից նոյնպէս կարելի է ստանալ կաշուեղէն և գալանտերէյնի ապրանքներ էժանոտ գներով: Վարշավայի բաժ. հասցէն՝ Варшава, Лешно № 8, М. Н. Яргулову.
(կ. հ.) 938 30—20

„ՊՐՈՎՕԴՆԻԿ"
1897 թ. 1888
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՌԻԳԱՅՈՒՄ
Անդրկովկասեան փաբրիկային պահեստ Թիֆլիսում
ՍՕԼՕԼԱԿՍԿԱՅԱ ՓՈՂ., № 4
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿԻ ՀԱՏՈՎ
ԼԻՆՕԼԵՈՒՄ մեծ քանակով, միագոյն և նկարներով.
ԱՍԲԵՍՏԻ ԿԱՐՏՕՆ.
ԱՍԲԵՍՏԻ ԵՒ ՏԱԼԿԻ ՆՈՒՇԵՐ.
ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
„ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ" ԼԻՆՕԼԵՈՒՄ միջանցիկ նկարներով, որոնք չեն ձևափոխվում մինչև լինօլեումի վերջնական մաշվելը:
(յաւիտենական պատառներ) ըէլեֆ նկարներով զարմանալի իրանց չքնաղութեամբ և մեծ խնայողութեամբ:
ԼԻՆԿՐՈՒՍՏԱ
№ 1
1034. 0—4


ԱՐԾԱԹԻ ԺԱՄԱՑՈՅՑ
Միայն 4 ր. 95 կ., 2 հատը՝ 9 ր. 50 կ.
[illegible]
Հասցէն՝ Т-во „ПАТЕНТЪ", Варшава, Св. Креста 48.
Խնդրում ենք հասցէն կարդալ և ամուր կպցնել ծրարի երեսին:
(В. 63718) 1020. 11—8